խրնթայաբար ստացել են կանոնաւոր կրթութիւն եւ աւարտել են իւրեանց ուսմունքը Կովկասեան փոխարքայութեան կամ Ռուսիոյ մայրաքաղաքների միջնակարգ եւ բարձրաստիճան ուսումնարաններում։

5. Վերջապէս՝ Ֆրանսիան միշտ, որպէս եւ այժմ իսկ. մեծ նշանակութիւն է տուել իւր առեւտրական յարաբերութիւններին Հայ վաճառականների հետ եւ միշտ աշխատել է խրախուսել եւ ընդարձակել այդ յարաբերութիւնները։ Միւս կողմից՝ եւ ինքեանք Հայ վաճառականները միշտ սիրել են յարաբերութիւններ ունենալ Ֆրանսիայի հետ՝ ոչ միայն Կ. Պօլսոյ Հայերը, այլ եւ անդրկովկասեան գաւառների Հայերը ցոյց են տուել միշտ այդ ձգտումն։ Այդ վաճառականական յարաբերութեանց կենդրոնները եղել են եւ են՝ Փարիզ, Լիօն, եւ մանաւանդ Մարսիլիա։ Այն քաղաքում ներկայ դարուս 30 – 40 թուականներում բաւական մեծ գործեր էին կատարում Ռուսիոյ Հայ վաճառականները, որոց մէջ աւելի նշանաւոր տեղ բռնում էին Ագուլիսեցիք, բայց յետոյ բաւական համառօտւեցան այդ գործերը։ Այժմ ահա մի քանի տարի է որ Հայ վաճառականները վերստին սկսել են ընդարձակել իւրեանց յարաբերութիւնները Մարսիլիայի հետ, ուր մի Հայկական ընկերութիւն ունի արդէն իւր սեփական նաւը, որը ման է գալի Միջերկրական եւ Սեւ ծովերի վերայ, հասնելով մինչեւ Փոթի։ Այս ի հարկէ շատ ուրախալի է, վասն զի Հայերը՝ ինչպէս մի ժամանակ մեծ վաճառականական դեր խաղալով Բաբելոնի եւ այլ ասիական մեծամեծ առեւտրական հրապարակների վերայ, իբրեւ գլխաւոր միջնորդ Ասիայի եւ Եւրոպայի վաճառականական յարաբերութեանց մէջ, կարողացան բարձրացնել եւ փառաւորել իւրեանց ազգի եւ Հայաստանի քաղաքական պատիւը եւ նիւթական յաջողութիւնը, նոյնպէս եւ այժմ նոքա միայն այդ ճանապարհով կարող են հասնել նոյն նպատակին։

* * *

Ի 7/19 Մարտի 1877
Ի Փարիզ.

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐՆԵՐ.

Գանձակեցի մեր եղբայրներէն Մեծ. Պարոնայք Ալեքսանդր Ադաջանեան Խաչատրեանց, Ասլան Տէր-Վարդանեանց, Աւետիս Մալեանց, Խաչատուր Մկրտումեանց, Մկրտիչ Մնացականեանց եւ Ներսէս Աբրահամեանց Տէր-Ներսէսեանց՝ յանուն եւ ի պէտս Տաճարի Ս. Էջմիածնի՝ երկու շուրջառ, երեք փորուրար, մի զոյգ թեւնոց (բազպան ժամարարի), երկու հատուած շուրջառացու (որոցմէ Եպիսկոպոսական ձեռնադրութեան Խարտաւիլակի համար մի շապիկ եւ սարկաւագի մի ուրար շինուեցաւ) եւ մի միջակագիր գորգ նուիրեցին ի ձեռն Հոգեզգօն Գրիգոր Եպիսկոպոսի Մուշեղեանց։

Գովելով յիշեալ պարոնայից բարեպաշտութիւնը՝ Ամենագրոյս միջոցաւ եւ շնորհակալութեամբ կհրատարակեմք ի տեղեկութիւն մեր սիրելի Ազգայնոց։

Յառաջակայ ուսումնական շրջանում ի Ս. Գէորգեան ձեմարան ընդունուելիք աշակերտաց վերաբերեալ հետագայ հրահանգը ի կողմանէ ձեմարանական Վարչութեան կը հրատարակուի, որոյ առանձին տպուած օրինակները պէտք եղած տեղեաց եւս պիտի խրկուին ի կարեւոր հրահանգութիւն։

ՀՐԱՀԱՆԳ

ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱԶԱԿԵՐՏԱՑ ՈՐՔ ԿԱՄԻՑԻՆ ՄՏՆԵԼ ՅԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՁԵՄԱՐԱՆԻՍ

Ի 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1877 ՏԱՐԻՈՅՍ։

Ըստ հրամանի Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց եւ ըստ սահմանելոյ ուսումնական ժողովոյ ձեմարանիս՝ ծանուցանի՝ որոց անկն է, զի

Ա. Յառաջիկայ ուսումնական ամի ձեմարանիս, որոյ սկիզբն է ի 1 Սեպտեմբերի, բացցի եւ հինգերորդ դասարան Դպրանոցական բաժնի սորա։

Բ. Միայն յառաջին դասարանն ընկալեալ լիցին նորամուտ աշակերտք։

Գ. Ընտրելի են պատանիք առաւելապէս յայնպիսի բազմամարդ հայաբնակ կողմանց՝ յորս չեւ եւս դատնին դրպրոցք կանոնաւորք, ոչ չորեքդասեան հոգեւոր ուսումնարանք եւ ոչ երկդասեան դպրոցք ծխականք լիովին բարեկարգեալք։

Դ. Ընտրելիքն պարտին լինել որբք եւ կամ որդիք աղքատ եւ չքաւոր ծնողաց։

Ե. Ամք հասակի պատանեաց ցանկացողաց մտանել յառաջին դասարան ձեմարանիս պարտին լինել ոչ պակաս քան զ12, եւ ոչ աւելի քան զ14։

Զ. Պարտ է նոցա քաջառողջս լինել մարմնով, եւ ունել զբնատուր ուշիմութիւն, զսրամտութիւն, զհլութիւն եւ զպարկեշտութիւն։

Է. Ուսմունքն զորոց հարցաքննելի են աշակերտք ցանկացողք մտանել յառաջին դասարան ձեմարանիս՝ են

1.) ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ. այս ինքն

ա. Գլխաւոր աղօթք (ի Ժամադրոց) ուսեալք ի բերան՝ հանդերձ Քարոզմանութեամբ նոցին յաշխարհիկ բարբառ։

բ. Պատմութիւն հին եւ նոր կտակարանաց համառօտ։

գ. Սկզբունք Քրիստոնէական վարդապետութեան։

2.) ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ.

ա. Դրամարժ ընթերցումն հայերէն լեզուի՝ հանդերձ Քարոզմանութեամբ բանից սրբոյ աւետարանին ի զրոց լեզուէ յաշխարհիկն։

բ. Հայերէն Քերականութեան առաջին մասն՝ հանդերձ վերլուծութեամբ մասանց բանի։

3.) ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Զորեքին գլխաւոր գործողութիւնք Թուաբանութեան եւ փորձք նոցին։

4.) ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ.

Վարժ ընթերցանութիւն՝ հանդերձ հայերէն Քարոզմանութեամբ սովորական բառից եւ խօսից։

5.) ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ։

Ը. Ցանկացողքն մտանել ի ձեմարանս պարտին ունել երիս վկայագիրս. 1, զարձանագրական (մեարիբական) վկա-